

Կենսաբանություն

УДК 591.5

Է. Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԱՐԱԾՎԱԾ ԵՐԿԿԵՆՑԱՂՆԵՐԻ ՈՐՈՇԻՉ

Հայաստանում տարածված են երկկենցաղների 8 տեսակներ, որոնցից 2-ը դասվում են պոչավորների կարգին (*Caudata, Triturus ssp.*), 6-ը՝ անպոչների կարգին (*Amura*):

Երկկենցաղները հանրապետությունում տարածված են անհավասարաչափ, սակայն գործնականում այս դասի ներկայացուցիչներին կարելի է հանդիպել ամենուրեք: Չնայած Հայաստանի երկկենցաղների տեսակների սակավաթիվ լինելուն՝ նույն ցեղի հասուն առանձնյակների տեսակային պատկանելությունը որոշելը բավական դժվար է: Այդ տեսակների արեալները հաճախ մասնակիորեն ծածկվում են, ինչը լրացուցիչ դժվարություններ է ստեղծում դրանք որոշելու հարցում: Այլ խնդիր է շերտավուկների ու գորտնկիթի տեսակային պատկանելությունը որոշելը, քանի որ բնության մեջ դրանք հաճախ հանդիպում են իրարից առանձին: Մեզ հայտնի մի շարք գրական աղբյուրներում բերվում են տեսակները որոշելու բանալիներ [1]: Սակայն նույն ցեղի առանձին տեսակները որոշելը բավականին բարդ է, քանի որ դրա համար պահանջվում են լրացուցիչ ձևաբանական չափումներ:

Մեր աշխատանքի նպատակն է՝ մշակել բանալիներ հանրապետությունում տարածված երկկենցաղների հասուն առանձնյակների, շերտավուկների և գորտնկիթի տեսակային պատկանելությունը որոշելու համար:

ԳՈՐՏՆԿԻԹ

- 1 (2) Չվերը դրված են մեկական..... Պոչավորներ (*Caudata, Triturus ssp.*)
- 2 (1) Չվերը դրված են երկար լորձային ժապավենի կամ մեծ կույտերի ձևով.....Անպոչներ (*Amura*)
- 3 (6) Չվերը դրված են երկար ժապավենի ձևով:
- 4 (5) Չվերը ժապավենում դրված են խառը, ձվի տրամագիծը 1,8–2,0 մմ է □□.....Սիրիական սխտորագորտ (*Pelobates syriacus*)
- 5 (4) Չվերը ժապավենում դրված են կանոնավոր, երկու շարքով, ձվի տրամագիծը 1,0–2,3 մմ է.....Կանաչ դդող (*Bufo viridis*)
- 6 (3) Չվերը դրված են լորձային գնդաձև բշտում:
- 7 (10) Չվակույտերը փոքր են, երբեմն անկանոն ձևի կամ մեկական ձվերի տես-

- քով, սաղմը դեղնաշագանակագույն է .....Ծառագորտեր (*Hyla ssp.*)
- 8 (9) Չվի տրամագիծը թաղանթներով 3–5,5 մմ է.....Սովորական ծառագորտ (*Hyla arborea*)
- 9 (8) Չվի տրամագիծը թաղանթներով 4–4,5 մմ է ..... Փոքրասիական ծառագորտ (*Hyla savignyi*)
- 10 (7) Չվակույտերը շատ մեծ են, ձվի և սաղմի գույնը մուգ է՝ գրեթե սև ..... Գորտեր (*Rana ssp.*)
- 11 (12) Չվակույտերը գնդաձև են, 10 սմ-ից ավելի տրամագծով ..... Փոքրասիական գորտ (*Rana macrocnemis*)
- 12 (11) Չվակույտերը լինում են անկանոն, սովորաբար 5 սմ-ից ավել տրամագծով ..... Լճագորտ (*Rana ridibunda*)

ՇԵՐԵՓՈՒԿՆԵՐ

- 1 (4) Ունի 4 վերջույթ, մարմինը երկարավուն է ...Պոչավորներ *Caudata (Triturus ssp.)*
- 2 (3) Մեջքի վրա կան գունանյութային առանձին կամ խմբերով դասավորված բծեր: Մեջքային լողակային ծալքը չունի մուգ հատված, պոչը գունավորված է՝ գրեթե միագույն, ավելի հասուն շերտավորների աչքերի ետևում կան բաց գույնի բծեր.....Փոքրասիական տրիտոն *Caudata (Triturus ssp.)*
- 3 (2) Մեջքը կողքերից մուգ չէ: Պոչային լողակային ծալքի վերին և ստորին եզրերը պոչի երկայնքով աստիճանաբար միանում են իրար: Կերպարանավորվող առանձնյակների փորի մակերևույթով ցրված են մուգ գույնի կետեր.....Սովորական տրիտոն (*Triturus vulgaris*)
- 4 (1) Ունի 2 վերջույթ, մարմինը գնդաձև է .....Անպոչներ (*Anura*)
- 5 (12) Հետանցքը բացվում է անհամաչափ՝ մարմնի աջ կողմում:
- 6 (9) Պոչի լողակի վերին կատարը չի հասնում աչքերի միջև ընկած տարածությանը: Աչքերը նկատելի են միայն վերևից նայելիս:
- 7 (8) Շրթնային ատամները դասավորված են վերին շրթունքի վրա՝ երեք շարքով..... Լճագորտ (*Rana ridibunda*)
- 8 (7) Շրթնային ատամները դասավորված են վերին և ստորին շրթունքների վրա՝ երեքական շարքերով.....Փոքրասիական գորտ (*Rana macrocnemis*)
- 9 (6) Պոչային լողակի վերին կատարը գրեթե հասնում է մինչև աչքերի միջև ընկած տարածությանը: Աչքերը լայն են տեղադրված, ինչը նկատելի է ինչպես ներքևից, այնպես էլ վերևից նայելիս.....Ծառագորտեր (*Hyla ssp.*)
- 10 (11) Երկարությունը 46–60 մմ է: Լողակային ծալքերի և/կամ պոչի վրա կան բծեր, բերանային սկավառակը շրջապատված է պտկիկներով (բացի ամենավերևի մասից) .....Սովորական ծառագորտ (*Hyla arborea*)
- 11 (10) Երկարությունը 35–44 մմ է: Բերանային սկավառակն ամբողջությամբ շրջապատված է պտկիկներով.....Փոքրասիական ծառագորտ(*Hyla savignyi*)
- 12 (5) Հետանցքը բացվում է համաչափ՝ մարմնի միջին գծի վրա:
- 13 (14) Բերանային սկավառակը եզերված է ծծիչներով միայն կողքից: Շրթնային ատամները վերին շրթունքի վրա դասավորված են երկու, ստորինի վրա՝ երեք շարքով.....Կանաչ դողոշ (*Bufo viridis*)
- 14 (13) Բերանային սկավառակը կողքից և ներքևից եզերված է ծծիչներով: Շրթնային ատամները վերին շրթունքի վրա դասավորված են երկու, ստորինի վրա՝ չորս շարքով: Բացի այդ, կողքից կան մի քանի մանր ատամներ .....Սիրիական սխտորագորտ (*Pelobates syriacus*)

ՀԱՍՈՒՆ ՉԵՎԵՐ

- 1 (4) Ունի պոչ.....Պոչավորներ (*Caudata*)
- 2 (3) Բաց գույնի վորի վրա կան մուգ բծեր, երկարությունը 53–89 մմ է: Գլխի վրա կան երկայնակի մուգ գույնի բծեր, որոնցից առնվազն մեկը (աչքի վրայով անցնողը) լավ արտահայտված է: Մաշկը հարթ է կամ մանր հատիկավոր..... Սովորական տրիտոն (*Triturus vulgaris*)
- 3 (2) Փորը բաց գույնի է, առանց մուգ բծերի, մարմնի կողքերին կա բաց գույնի գիծ, որը սահմանազատված է մուգ շերտով.....Փոքրասիական տրիտոն (*Triturus vittatus*)
- 4 (1) Պոչը բացակայում է .....Անպոչներ (*Anura*)
- 5 (6) Վերին ծնոտի վրա առամները բացակայում են: Մարմինը ծածկված է թմբիկներով և գորտնուկներով: Առջևի և ետին վերջույթների երկարությունները գրեթե հավասար են.....Կանաչ դողոշ (*Bufo viridis*)
- 6 (5) Վերին ծնոտի վրա կան առամներ: Մարմինը հարթ է՝ առանց թմբիկների և գորտնուկների: Ետին վերջույթներն ավելի լավ են զարգացած, քան առջևիները:
- 7 (10) Առջևի և ետին վերջույթների մատների վրա կան սկավառակաձև ծծաններ: Լեզուն առջևի ծայրում սովորաբար առանց կտրվածքի է: .....Ծառագորտեր (*Hyla ssp.*)
- 8 (9) Մեջքը վորից անջատվում է պարզ, սև, հոծ գծով, որը սովորաբար առաջացնում է աճուկային օղակ, կամ կողքային գիծը հասնում է աճուկի ներքին մակերեսին.....Շելկովնիկովի ծառագորտ (*Hyla arborea schelkownikowi*)
- 9 (8) Մեջքային կողմի մաշկը վորից սահմանազատվում է սև գծով՝ առանց աճուկային օղակ առաջացնելու.....Փոքրասիական ծառագորտ (*Hyla savignyi*)
- 10 (7) Առջևի և ետին վերջույթների վրա սկավառակաձև ծծանները բացակայում են: Լեզուն առջևի մասում կտրված է:
- 11 (12) Բիբր հորիզոնական չէ: Աչքերը խիստ ուռուցիկ են, բիբր գրեթե միշտ նկատելի է նեղ ճեղքի ձևով: Ետին թաթի վրա կա լայն, բահանման, դեղնավուն կոշտացում: Մարմինը լայն է և կարճ, գրեթե կլորավուն: Սպիտակամոխրագույն ֆոնի վրա կան մուգ կանաչավուն բծեր:.....Սիրիական սխտորագորտ (*Pelobates syriacus*)
- 12 (11) Բիբր հորիզոնական է:
- 13 (14) Ծնոտային սև բիծը բացակայում է, իսկ եթե կա, ապա մեջքը կանաչ է: Արմներն ունեն ռեզոնատորներ, որոնք բշտի ձևով տեղադրված են բերանի անկյուններում.....Լճագորտ (*Rana ridibunda*)
- 14 (13) Գնչի ծայրից աչքի և թմբկաթաղանթի վրայով դեպի ետ, գրեթե մինչև բազուկը, ձգվում է ծնոտային նեղ, սև շերտ: Ենթածնոտային մաշկի տակ արմներն ունեն թաքնված օղային պարկեր (ռեզոնատորներ): Երբեմն դրանք բացակայում են: Ունեն շագանակագույն գունավորում՝ մուգ շագանակագույն բծերով.....Փոքրասիական գորտ (*Rana macrocnemis*):

Կենդանաբանության ամբիոն

Ստացվել է 24.09.2007

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Банников А.Г., Даревский И.С. и др. Определитель земноводных и пресмыкающихся фауны СССР. М.: Просвещение, 1977, 415 с.

Э. М. ЕГИАЗАРЯН

ОПРЕДЕЛИТЕЛЬ ЗЕМНОВОДНЫХ, РАСПРОСТРАНЕННЫХ В АРМЕНИИ

Резюме

В работе даны ключи для определения видовой принадлежности икры земноводных, головастиков и взрослых особей, встречающихся в Армении.

E. M. YEGIASARYAN

DETERMINER OF AMPHIBIANS SPREADED IN ARMENIA

Summary

In this paper there are keys for definition of species' belonging of Amphibians' eggs, tadpoles and adult specimen in Armenia.